

ՀՈԴՎԱԾՆԵՐ. STATYI. ARTICLES

ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ ԴՊՐՈՑԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

*Հ. Պետերմանի գրքի
լույսընծայման 180-ամյակի առթիվ:*

Հայերենի ուսումնասիրության հարցերը համեմատական լեզվաբանության քննության առարկա են եղել ավելի քան երկու հարյուր տարիների ընթացքում, եթե նկատի ունենանք ուշմիջնադարյան քերականագիտությունից լեզվաբանության, իբրև ինքնուրույն գիտության, առանձնացման պատմությունը:

Այդ հարցերին գիտության զարգացման առանձին փուլերում տրվել են իրարից բավականին տարբեր գնահատականներ՝ հիմնականում նվազագույնից մինչև առավելագույնը, ինչքան որ լեզվական փաստերին վերահասու են եղել ուսումնասիրողները: Մյուս կողմից, սակայն, ոչ բավարար ուշադրություն է դարձվել տեսական գիտելիքների հաջորդականությանը, առավել ևս՝ առաջնայնությանը, դրանց ձեռքբերման ակունքներին, գործադրման չափերին ու արդյունավետությանը: Սա արդեն լեզվաբանության պատմության խնդիր է, որ գիտության զարգացման նոր պայմաններում, բնականաբար, ի վիճակի է այդ խնդրին առնչվող հարցերին տալ նոր լուծումներ:

Սույն հոդվածով անդրադառնում ենք խնդրի այդ կողմին վերաբերող մի առանցքային հարցի, այն է՝ ինչ ներդրում կամ նպաստ ունի Վենետիկի Մխիթարյան դպրոցը հայերենի հնդեվրոպական ուսումնասիրության սկզբնավորման մեջ:

Հայտնի է, որ այդ դպրոցի գործունեության հիմնական ուղղություններն են եղել հայ հին և միջնադարյան գրականության, տարբեր լեզուներից նախկինում կատարված և նոր կատարվող թարգմանությունների հրատարակումը, հայերենի գիտական ուսումնասիրությունը, տարբեր բնույթի բառարանների կազմումը: Իսկ գործնական առումով

նրանք մեծ ուշադրություն են դարձնում գիտության տարբեր ճյուղերի, ընդ որում լեզուների, մանավանդ հայերենի ուսուցմանը իրենց իսկ հաստատած դպրոցներում, ինչպես նաև օտարազգի գիտնականներին կամ գիտության ուղին բռնաձևերին հայերենին հասու դարձնելուն: Այս վերջինի վառ օրինակ է գերմանացի Յուլիոս Հայնրիխ Պետերմանի ուսումնառությունը Վենետիկի Մխիթարյանների վանքում:

Յ. Հ. Պետերմանը (12. 08. 1801-1876 թթ.) 1832 թ. Պրուսիայի կառավարության կողմից ուղարկվել է Վենետիկ հայերեն և թուրքերեն սովորելու: 1837թ.¹ հինգ տարի անց, վերադարձել է Բեռլին և նշանակվել համալսարանի պրոֆեսոր: 1852-1855 թթ. շրջագայել է Արևելքում (Դամասկոս, Երուսաղեմ, Կիլիկիա, Մոսուլ, Բաղդադ): Եղել է Ջուղայում, որտեղ «երկար ժամանակ իջևանել է»:

1837 թ. Վենետիկի Մխիթարյանների «համաձայնությամբ» լույս է տեսնում նրա՝ լատիներենով գրված հայտնի աշխատությունը՝ հիմնականում նվիրված հին հայերենի հնչյունաբանությանը («Գիրք 1», էջ 1-88) և քերականական կառուցվածքին («Գիրք 2», էջ 89-258)¹:

Նման քերականություններում հնչյունաբանությանը համեմատաբար մեծ տեղ տալը իր ժամանակի համար սովորական չէր, այն է՝ գրքի երեք գլուխներում մանրամասն վերլուծությամբ խոսել հայերենի (սովորական ձևակերպումով) «Գրերի մասին» (էջ 1-13), «Արտասանության մասին» (էջ 14-48) և «Գրերի փոփոխության մասին» (էջ 49-88):

Բացի այն, որ հեղինակը հայերենի իմացության մեջ հանդես է բերում մեծ հմտություն, լեզվական իրակությունների մանրամասները լիովին ներկայացնելու սքանչելի կարողություն, վերջինիս տվյալները ի վիճակի է լինում համեմատության մեջ դնելու մի շարք (մեկ տասնյակից ավելի) լեզուների համարժեքների կամ այդպիսին համարվողների հետ:

Այս քերականության ոգին, իրապես, լեզուների հնչյունաբանությանը և արմատաբանությանը վերաբերող տվյալների ծագումնային համեմատությունն է, որն իրականացվում է իր ժամանակի մակարդակի վրա, և որն էլ փառք է բերում նրա հեղինակին՝ իբրև հայերենի հնդեվրոպական ուսումնասիրության առաջին դեմք համաշխարհային լեզվաբանական գիտության մեջ:

Մինչև այս գրքի երևան գալը, ինչպես հայտնի է, մեզանում լույս տեսած շատ աշխատություններում այս կամ այն չափով անդրադարձ կատարվել էր հայերենի և այլ լեզուների միջև նկատելի հնչյունական և

¹ J. H. Petermann, Grammatica linguae armeniacae, Berolini, 1837, 264 (ss).

այլ կարգի համընկումներին, որոնք, կարելի է ասել, ունեին տարերային, բայց ոչ համակարգված (սիստեմատիկ) բնույթ²: Վերջինս նկատվում է Պետերմանի այս աշխատության մեջ, ընդ որում մասամբ՝ «Գիրք 2»-ում, հիմնականում՝ «Գիրք 1»-ում:

Սույն գրքում մեր այս թեմայի առումով տվյալ դեպքում ուշադրության առարկա է Պետերմանի գրքի միայն հնչյունաբանությունը, որը հեղինակը ներկայացնում է համեմատելի լեզուների տվյալների մի ամբողջ հանդիսարանի (ռեպերտուարի) մեջ, որն էլ դառնում է հիմք հետագա համեմատաբանական ուսումնասիրությունների համար, ինչպես նաև օրինակ՝ այդ բնագավառում ավելի ծավալուն ձեռնարկումների:

Ամենից առաջ նկատենք, որ Պետերմանը հայերենի ուսումն առել էր, ինչպես վերը նշեցինք, վենետիկյան դպրոցում, այլև ավելացնենք, որ այդ տարիներին և նույնիսկ մի քանի տասնամյակ առաջ մխիթարյան հայրերը ձեռնամուխ էին եղել նոր բացատրական բառարանի կազմության գործին, որն էլ լույս տեսավ երկու հատորով, ճիշտ նույն տարում, ինչ Պետերմանի գիրքը³: Այնպես որ այդ բառարանը ևս կարող էր հիմք հանդիսանալ լեզուների համեմատության, մանավանդ որ նրանում արմատական բառերին՝ իբրև բառահոդվածների, կից բերվում են հունարեն և լատիներեն (նաև արևելյան լեզուներով) համարժեքներ, որոնք հաճախ ներկայանում են ծագումնային ընդհանրությամբ:

Մնում էր տեսական այն մշակումը, որ դրանք, ինչպես նաև դրանց նմանությամբ (անալոգիայով) այլ լեզուների տվյալները դրվեին ծագումնային համեմատության մեջ՝ ոչ միայն հնչյունական, այլև իմաստային նկատառումներով, որն էլ տվյալ դեպքում սովորաբար անում է Պետերմանը իր գրքի հնչյունաբանության բաժնում, որը և միանգամայն արժեքավոր է ոչ միայն ինքնին, այլև հետագա հնդեվրոպաբանության պատմության տեսանկյունից:

Ըստ այսմ վստահաբար պետք է հաստատել, որ հայերենի հնդեվրոպական բնույթի որոշման և նույնպիսի ցեղակցության մեջ նրա ընդգրկման հարցը իր հիմքում առնչվում է Մխիթարյան միաբանության անվան

² Հմմտ. Գ. Բ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե. 1959: Г. Б. Джаукян, Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967:

³ Մինչ այդ հրապարակի վրա էր Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» գիրքը (հհ. 1-2, Վենետիկ, 1749-1769), որի առաջին հատորը լիովին հիմք է հանդիսացել հետագայում ավելի ծավալուն բառարանի ստեղծման: Ի դեպ՝ 2017 թ. հորեյանական է նաև «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837) աշխատության համար:

հետ: Եվրոպական հայագիտությունը հայերենի վերաբերյալ փաստական նյութի ձեռքբերման, ինչպես նաև հայերենի իմացության և գործադրման հարցում, պարզվում է, ամենից առաջ պարտական է վենետիկյան (հետագայում նաև վիեննական) Մխիթարյան դպրոցին:

Ստորև անդրադառնում ենք Պետերմանի գրքի «Հնչյունաբանության» այն հատվածների համապատասխան նյութին, որը վերաբերում է հայերենի և ցեղակից այլ լեզուների համեմատական քննությանը, առանձնապես հնչյունաբանության և արմատաբանության կտրվածքով:

Մինչ այդ նկատենք, որ վերջին ժամանակներս գրված այն աշխատությունները, որոնցում այս կամ այն չափով խոսվում է նաև Պետերմանի հայերենագիտական վաստակի մասին, հիշյալ քերականության հնչյունաբանությանը վերաբերող հատվածի մասնավոր քննություն չի կատարվում: Այնինչ այդ բաժինն է այն մեծագույն կովանը, որը հիմք է հանդիսանում գրքի գրախոսականի (գրված Լ. Դիֆենբախի կողմից), այլև հետագա աշխատանքների համար՝ Պետերմանին համարելու հայերենի հնդեվրոպական բնույթի առաջին ուսումնասիրող՝ տեսական համեմատաբանական հիմքի վրա:

1. Առաջին գլուխը, ինչպես վերը նշվեց, վերաբերում է մեսրոպյան գրերի այբբենական կարգին, սղագրությանը և ուղղագրությանը:

ա) Ինչպիսի՞ն է հայոց այբուբենի գրադարձությունն ըստ Պետերմանի գրքի: Բերվում է հայերենի այբուբենի աղյուսակը, որում գրերի անունները նշվում են արևմտահայերենի արտասանությամբ՝ պայթական ծայնեղի խլացում և խուլի ծայնեղացում. հմմտ. *բ* - բեն [p], *գ* - գիմ [k], *դ* - դա [t], *պ* - պե [b], *կ* - կեն [g]. *տ* - տին [d], այդպես նաև այլ դեպքերում՝ *ա*- այբ [aip], *ծ*- ծա [ts (ç)], *ծ* - ծա [ds (ß)], սակայն ոչ՝ *ջ* - ջե [տևական dsh, (g')], *ճ* - ճե [ոչ տևական dch, (j)]. շնչեղ խուլերը մնում են միատեսակ՝ ընդհանուր հայերենյան. *փ* - փիւր [pp, ph (p')], *թ* - թո [th (t')], *ք* - քե [kh (k')], *ց* - [tz (i)] , *չ* - չա [tch (c')]:

Այստեղ կա՝ 1) շփոթ *ջ* - ջե [dsh (g')], *ճ* - ճե [dch (j)] գրերի միջև, որ փորձ է արվում պարզել տևական-ոչ-տևական հակադրությամբ, այնինչ դրանք հակադրվում են ծայնեղություն / խլություն հատկանիշով,

2) *ո*-ին հատկացվում է երկբարբառային արտասանություն [ուո (wö)], իսկ լատինագիր նոր ձեռքբերում *օ*-ին՝ երկար արտասանություն [ô], 3) այբուբենի 34-րդ գիրը՝ *ւ*-ը, որն առհասարակ հայտնի է իր երկակի անվանումով (*վյուն* և *հյուն*), բերվում է «փւն. տե՛ս հիւն» տեսքով, որտեղ «հիւն»-ը *իւ* երկբարբառի *իու* գրությամբ հնագույն արտասանության նմուշ է:

բ) Եվ ըստ այդմ էլ հայերենի հնչյունների գրադարձությունը ներկայացվում է հետևյալ կերպ:

Բաղաձայններ.

բ [p]	պ [b]	փ [pp, ph (p')]	վ [w]	մ [m]	հ [hh (h')]	լաւ.՝ o [ô]	
դ [t]	տ [d]	թ [th (t')]	զ [z]	ս [s]	լ [l]	յ [h]	ֆ [f]
գ [k]	կ [g]	ք [kh (k')]	ղ [gh (g')]	խ[ch]	ն [n]	է [ê]	

ծ [ts (ç)] ծ[ds (ß)] ց [tz (ï)] ժ [j] շ [sh (s')] | ր [r] | ռ [r(r')] |

ջ[dsh (g')] ճ [dsh (j)] չ [tsh(c')]

Ձայնավորներ.

ա [a] ո [wö (ö)] լ [u, v]

ե [je (é)] ի [i]

ը [ñ]

գ) Մյուս երկու՝ հնչյունների սղագրությանը և ուղղագրությանը վերաբերող հատվածներն ինքնին հետաքրքիր են, սակայն մեր բուն խնդրին չեն առնչվում, ուստի դրանց չենք անդրադառնում:

2. Երկրորդ գլուխը նվիրված է բաղաձայն և ձայնավոր հնչյուններին, ինչպես նաև Եզնիկի «Եղծ աղանդոց» գրքի 2-րդ գլխի «Մինչ չեւ բնաւ էր ինչ... և զոր Արիմնն գործէր՝ չար էր և թիւր» հատվածին՝ տառադարձությամբ, թարգմանությամբ և դժվար տեղիների մեկնաբանումներով:

ա) Բաղաձայն հնչյունների համեմատությունը սկսվում է այն բանից, որ հին հայերենի համապատասխան տվյալների արժեքը կարելի է որոշել մի քանի (չորս) սկզբունքով. հայերեն գրչության համեմատությունը հունարենի և լատիներենի, և հակառակը, մեսրոպյան գրերի դասավորությունը՝ ի համեմատություն հունականի, և Թրակացու քերականության թարգմանության տվյալների զուգադրումը նախօրինակի հետ, սկզբունքներ, որ լիովին կիրառելի են դառնում հետագա ուսումնասիրողների (Հյուբշման, Մեյե, Աճառյան և այլք) կողմից⁴: Ըստ այդմ՝ առանձին (մեկառմեկ) համեմատության են առնվում ուղղակի և լրացուցիչ օրինակների հիման վրա՝ անհրաժեշտ վերլուծությամբ:

բ) Պայթական և շփական բաղաձայնները ներկայացվում են ավելի լայն համեմատության մեջ, ընդ որում դրանք համեմատվում են մի կողմից՝ Թրակացու քերականության, մյուս կողմից՝ այլ հեղինակների

⁴ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928:

(Ս. Գիրք, Ագաթանգեղոս, Եզնիկ, Խորենացի, Դավիթ Անհաղթ և այլք) տվյալների հետ:

Հնդեվրոպական մյուս լեզուներից համեմատության եզր են վերցված գերակշիռ մասով երեքը՝ հին հնդկերեն (սանսկրիտ), հունարեն և լատիներեն, որոնք, ինչպես գիտենք, դասական համեմատական լեզվաբանության մեջ ավելի ուշ դիտվեցին, այսպես կոչված, մեծ վարկանիշ («արեստիժ») ունեցող լեզուներ:

Նշենք բերված օրինակներից միայն մի քանիսը.

a. Հայ. *բ, պ, փ, վ, լ ~ b (bh), p, v, ø (qrr)*, ընդ որում ոչ միայն հնդեվրոպական, այլև ուրիշ՝ ոչ ցեղակից լեզուների հետ. հմմտ. մի կողմից՝ *բասիլիոս ~ Basilius*, *պետրոս ~ Petrus*, *փիլիպպոս ~ Philippus*, *յաթթթ ~ Ιαφεθ*, *պոռտին առմենիան ~* πρώτιν Ἀρμενίαν և այլն⁵, մյուս կողմից՝ *բ-ի դեպքում՝ բանդ ~* սնս. bandh, *բազուկ ~* սնս. bâhu, զենդ. bâzu, *գուր ~* ասոր. gub, այլև հուն. κύπη, *բերել ~* սնս. bhr, հուն. φερο, *պ-ի դեպքում՝ ցապ ~* սնս. tap, *ըմ-պ-ել ~* սնս. pā, *պապի ~* սնս. prati, հուն. προτι, *ասպ ~* սնս. αφα և այլն, *իսկ վ-ի դեպքում՝ վեր ~* սնս. vrana, *կով ~* gô և այլն:

b. Հայ. *դ. տ. թ ~ d (t, dh), t, th*. հմմտ. *դ-ի դեպքում՝ դուռն (դուր) ~* սնս. dvār, *դի ~* սնս. dêha, *դուստր ~* սնս. duhitr, *դու ~* սնս. tvam, *դնել (եդի) ~* սնս. dhâ, *տ-ի դեպքում՝ կտրել ~* սնս. krt, *պաղապ ~* լատ. palatium, *կէտ ~* հուն. κήτος, *թ-ի դեպքում՝ թարգմանել ~* ասոր. targem, *կաթ (հմմտ. շիթ) ~* լատ. gutta, *եւթն ~* սնս. saptan և այլն:

c. Հայ. *գ, կ, ք ~ k, g, kh*. հմմտ. *ազապ ~* հուն. άγαπη, *ազոն ~* հուն. άγων, *կաթարոս ~* հուն. καθαρός, *արքեղայոս ~* հուն. Ἀρχελαός, *բուրզն ~* հուն. πυργός, *ռոռգ-անել ~* լատ. rig-are, *գոյն (> գունդ) ~* սնս. guna, *գեղ ~* հուն. καλλός, *գիր ~* հինդկ. giri, *եղունգն ~* սնս. nakha, *ցազր (փխ. ցազր) ~* սնս. dêvr, լատ. levir, *գիր-ել ~* սնս. vid, *գինի ~* լատ. vinum, *ազահ ~* լատ. avarus, *զգեստ ~* լատ. vestis, *գո-լ ~* սնս. bhû, հուն. φυ-ω, լատ. fu-o, *կեր (բաղադրություններում՝ խօխ-կեր, պահա-կեր) ~* սնս. kṛ, *կար-ել ~* սնս. kṛ, *ակն ~* հուն. όκος, լատ. oculus, *կեսուր (սկեսուր) ~* հուն. έκυρος, լատ. oculus, սնս. cnaçura, *փոկ ~* հուն. φωκη, լատ. phoca և այլն:

d. Հայ. *ս, ժ, գ, շ, ձ, ծ, ց ~ s, z, g, h* և այլն. հմմտ. *աստղ ~* լատ. astrum, հուն. άστηρ, *մժեղ ~* լատ. musca, *զի ~* զենդ. zi, սնս. hi, *կազմ ~* հուն. κοσμος, *ձին ~* լիտվ. ziema, ռուս. zima, *ծաննիլ ~* սնս. dshan,

⁵ Պետերմանը հայերեն հատուկ անունները նշում է փոքրատառերով:

զենդ. *zan*, հույն. *γενω*, լատ. *gigno*, *ծանուցանել*, *ծանօթ* (< *ծանաշել*) ~
սնս. *dshnâ*, հույն. *γινωσκω*, *ծերութիւն* ~ սնս. *dsharâ*, հույն. *γερουσια*,
ծուներ ~ սնս. *Dshano*, հույն. *γονυ*, լատ. *genu*. զենդ. *schënu*, *երէց* ~
հույն. *ἰερευσ*, *եկեղեցի* ~ հույն. *ἐκκλησια*, *ցեց* ~ հույն. *σης* և *այլն*:

e. Հայ. *ջ, ճ, չ* ~ *dsh, tsh, ksh, dhj* և *այլն*. հմմտ. *արջ* ~ սնս. *rksha*, *աջ*
~ սնս. *dakshina*, *մէջ* ~ սնս. *madhja*, *ջերմ* ~ սնս. *gharma*, զենդ. *garëma*,
հույն. *θερμη*, *ծան-աշել* (> *ծան-*) ~ սնս. *dshnâ*, *ծաշ-իլ* ~ սն. *tshash*, *աշ-ք*
(> *ակն-*) ~ սնս. *akshi* և *այլն*:

f. Հայ. *հ, խ* ~ *h, x, gh, c* և *այլն*. հմմտ. *հան-ել* ~ սնս. *hr*, *հար-կանել*
~ սնս. *han*, *համ* ~ սնս. *sam*, *հայր* ~ սնս. *pitr*, *հող* ~ լատ. *solum*, *հաւ* ~
լատ. *avis*, *հաւ* «պապ՝ հոր հայր» ~ լատ. *avus*, *հուր* ~ հույն. *πυρ*, *ուխար* ~
լատ. *pactum*, *խօսիլ* ~ սնս. *ghush* և *այլն*:

g. Հայ. *ղ, լ* ~ *g, l, ch* և *այլն*. հմմտ. *Աղաթիս* ~ հույն. *Ἀγαθίας*, *աղէ*
~ հույն. *ἄγε*, լատ. *age*, *աղաւնի* ~ ասոր. *jauno*, *մեղր* ~ լատ. *mel* (հմմտ.
սնս. *madhu*), հույն. *μεθυ*, *խիղ* ~ լատ. *oleum*, *աղուէս* ~ հույն. *ἄλωπηξ*,
լայն ~ հույն. *πλάτω*, *լի* ~ հույն. *πλε-ος*, *լու-այ* ~ հույն. *κλυω*, *լուանալ* ~
լատ. *lavare* (հմմտ. սնս. *plu*), հույն. *πλυνω* և *այլն*:

h. Հայ. *մ. յ. ն, ր/ռ* ~ *m, i, n, r* և *այլն*. հմմտ. *մնալ* ~ հույն. *μενω*, *միս*
~ սնս. *mânsa*, *ամիս* ~ սնս. *mâsa*, *մանուկ* ~ սնս. *manu*, *կամ* ~ սնս.
kâma, *քոյր* ~ սնս. *svasr*, *արեւ* ~ սնս. *ravi*, *սիրտ* ~ սնս. *hrd*, *ջուր* ~ սնս.
kshîra, *արջ* ~ սնս. *eksha*, *լեռն* ~ սնս. *giri*, *ձեռն* ~ սնս. *kara*, *դուռն* (<
դուր-ք) ~ հույն. *θυρα*, *Յոյն* ~ հույն. *Ἴων*, *այիլաթ* ~ հույն. *αἶλαθ* և *այլն*:

3. Ի՞նչ հետևություններ կարելի է անել վերը բերված համեմատու-
թյուններից:

ա) Դրանք անցկացվում են ժամանակի առումով ընդունելի վեր-
լուծության չափանիշներով, մանավանդ որ ամեն անգամ սահմանվում
են որոշակի հնչյունական հանդիպադրումներ և բերվում համապատաս-
խան օրինակներ:

բ) Վերջիններս առնված են ոչ միայն բուն հնդեվրոպական, այլև
մյուս, հատկապես սեմական լեզվաընտանիքին պատկանող լեզուներից
(արաբերեն, հրեերեն, արամեերեն, ասորերեն և այլն), այդուհանդերձ
բացարձակ գերակշռություն ունեն հնդեվրոպական լեզուների տվյալ-
ներով կատարվող համեմատությունները:

գ) Հայերենի տվյալները քաղված են Մխիթարյանների կազմած
հայտնի բառարաններից. «Հին հայկազյանը» (հհ. 1-2, Վենետիկ, 1749-
1769 թթ.) վաղուց ձեռքի վրա էր, իսկ «Նոր հայկազյանը» (հհ. 1-2,
Վենետիկ, 1836-1837 թթ.), որը, հեղինակների իսկ հավաստմամբ, մի

քանի տասնամյակի աշխատանքի արդյունք էր, լույս էր տեսնում նույն տարում, ինչ Պետերմանի հիշյալ քերականությունը, որ նշանակում է, թե այն ձեռագիր վիճակով կարող էր եվրոպացի հայագետի համար տեղում նյութեր քաղելու աղբյուր լինել: Այս դրույթի հիմնավորման համար եղած բազմաթիվ օրինակներից զուգադիր նշենք միայն մի քանիսը:

Հմմտ. *ագապ* ~ հուն. *άγαπη* (Gram., էջ 24) // բառ յն. *άγαπη*, *άγαπαι*, լատ. *agapae*, *charitas* (ՆՀԲ, 1, էջ 2), *ագոն* ~ հուն. *άγων* (Gram., էջ 24) // բառ յն. հուն. *άγων*, լատ. *certamen* (ՆՀԲ, 1, էջ 3), *ագահ* ~ լատ. *avarus* (Gram., էջ) // լատ. *avarus*, *avidus* (ՆՀԲ, 1, էջ 2), *աստղ* ~ լատ. *astrum*, հուն. *άστηρ* (Gram., էջ 21) // *άστηρ*, *άστηρον*, *stella*, *astrum*, *sidus*: լծ. ընդ լտ. *սդելլա*, *ասդռում*, *սիտուս*, յն. *ասդիռ*, *ասդռոն*, պ. *սիդարէ*, *սիդեր* (ՆՀԲ, 1, էջ 319), *արջ* ~ սնս. *rksha* (Gram., էջ 30, 34) // յն. *արգդու*, ռուսի լտ. *нонну* (ՆՀԲ, 1, էջ 374), *աջ* ~ սնս. *dakshina* (Gram., էջ 26) // յն. *δεξιά*, *dextera*, *dextra* (ՆՀԲ, 1, էջ 280), *աչք* (> *ակն*) ~ սնս. *akshi* (Gram., էջ 26, 34) // հուն. *όμμα*, *όφικ*, լատ. *oculus*, նաև *ակն*, լծ. արաբ. *այն*, լտ. *օգուլուս*, թուրք. *կէօզ*, սանս. *աքշի*, իսկ ի լեզու սլավոնաց *օքօ* է *ակն*, և *օշի* *աչք* (ՆՀԲ, 1, էջ 267):

Ինչպես երևում է համեմատությունից, Պետերմանը նախընտրել է ավելի սեղմ (թվով քիչ զուգահեռներ) ներկայացնելու եղանակը, իսկ «Նոր հայկազյանի» մեջ բերվող զուգահեռները նշվում են նաև իբրև լծորդական (= «համեմատելի») եզրեր (տե՛ս լծ. կրճատ նշումները), այնուհետև «Հայկազյանը» զուգադրումից բացի կատարում է բառամեկնություն, որ հիմք է հանդիսանում բնագրային հիմնավորմամբ բացատրությունների:

դ) Աշխատության հետագա մասերում ևս մասնակիորեն կատարվում են համեմատություններ, այս անգամ քերականական երևույթների նկարագրական վերլուծությունների մեջ: Եվ քանի որ հայերենի բնույթի վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների հեղինակներն առավելապես նկատի են ունենում հնչյունաբանությունը, ռուսի քերականական երևույթների դեպքում կատարվող համեմատություններին չի դարձվում այնքան մեծ ուշադրություն: Կարծում ենք, որ վերջիններս ևս կարևոր են նման աշխատության ամբողջական գնահատության տեսանկյունից: Իսկ ինչ վերաբերում է հայերենի (գրաբարի) բուն քերականության նկարագրությանը, ապա կարելի է նշել, որ այն ունեցել է միայն եվրոպական հայագիտությանը հայերենին ծանոթացնելու նպատակ:

ե) Պետերմանի համեմատությունները մեծ մասամբ ընդունվեցին հետագա ուսումնասիրողների կողմից (օրինակ՝ Բոպի հետագա աշխա-

տանքներում բազմիցս բերվում են դրանք), իսկ մի մասն էլ (հատկապես ոչ հնդեվրոպական լեզուներից բերվող օրինակները) չի արժանանում ընդունելության, և հետագայում ունենում են ավելի հավաստի ու համոզիչ համեմատություններ:

զ) Լեզվական տվյալների օգտագործման մեջ համեմատաբար մեծ տեղ են բռնում իրանական լեզուներինը, որը թերևս նկատառում կարելի է համարել՝ ասելու, թե տվյալների մեծաքանակ լինելն է նկատի առնվել գրքի գրախոսականում կարծիք հայտնելու, թե հայերենը իրանական ճյուղի լեզու է, մասնավորապես մարերենի մի բարբառ, որն, ինչ խոսք, հետագայում մերժվեց:

Ըստ այդմ՝ բերված համեմատությունները հիմնականում ճիշտ են, և հետագա ուսումնասիրողների կողմից այն օգտագործելի է եղել, իսկ մյուս մասը, կարելի է ասել, մնացել է հավանական լինելու սահմաններում, ուստի մինչև օրս դրանք դիտվում են անհավաստի: Ի դեպ՝ կան նաև այնպիսի համեմատություններ, որոնք, ճիշտ և հավաստի լինելով հանդերձ, ըստ երևույթին դուրս են մնացել հետագա ուսումնասիրողների ուշադրությունից: Օրինակ, հայ. *ըմպել* բառի բաղադրիչների *ըմ-պ-ել* ձևով առանձնացումը միանգամայն արգասավոր է, ուստի հավաստի այն հնդեվրոպական այլ լեզուների հետ իրական համեմատության համար, որն էլ կատարվել է միայն վերջին ժամանակներս:

4. Բավականին հետաքրքիր պիտի լիներ, իսկ հայերենի համեմատական ուսումնասիրության պատմության տեսանկյունից միանգամայն կարևոր և որոշակի պարզություն մտցնող այս թեմայի առանձին և ավելի մանրամասն քննությունը, ըստ որում ոչ միայն այս, այլև մյուս այն աշխատությունների նկատառումով, որոնց լեզվական նյութ է տրամադրել Մխիթարյան միաբանության միջավայրում ստեղծված գրականությունը, ինչպես նաև եվրոպացի հայագետների ուսումնառությունը և գիտական շփումները այդ միջավայրի հետ:

5. Մխիթարյան միաբանության ծավալած լեզվամշակման և լեզվագիտական գործունեության այս բնագավառը, այն է՝ հայագիտական որոշակի լիցք հաղորդել հնդեվրոպական լեզուների պատմահամեմատական ուսումնասիրությանը հայերենի ընդգրկման և հետագա խորացման հարցերում, մնում է ոչ լիովին ուսումնասիրված, որ նրան անդրադառնալու դեպքում շատ հարցեր կստանային նոր լուծում, և ըստ այդմ մեծապես կշահեր ոչ միայն հայ, այլև եվրոպական համեմատաբանությունը:

Այսպիսով, իբրև ամփոփում, կարելի է նշել հետևյալը: Հ. Պետերմանի «Հայերենի քերականություն» (1837 թ.) գիրքը հիմք հանդիսացավ հայերենը հնդեվրոպական լեզուների շարքում ընդգրկելու համար: Հայտնի է, որ գրքի հեղինակը (ինչպես եվրոպացի ուրիշ շատ գիտնականներ, որ ժամանակին զբաղվել են հայագիտությամբ, մասնավորապես համեմատաբանության բնագավառում), հայերենի մեջ ուսում է առել Մխիթարյան միաբանության միջավայրում, հնարավորություն է ունեցել իր գրքում, հատկապես հնչյունաբանության մեջ, անցկացնելու համեմատություններ հայերենի և եվրոպական հին ու նոր լեզուների միջև: Դրանում նրան օգնել են ոչ միայն հայերենի իմացությունը, այլև Մխիթարյանների ուսումնասիրությունները, առաջին հերթին «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» աշխատությունը, որում, նկատենք, հայերեն բառերին կից գրեթե միշտ տրվում են հին հունարեն, լատիներեն, հին պարսկերեն և այլ լեզուներով համեմատություններ, որոնք հաճախ ծագումով նույնն են: Այսպիսով, պատմահամեմատական լեզվաբանության արշալույսին կատարվում է առաջին իրական քայլը հայերենի ուսումնասիրության բնագավառում՝ իբրև հնդեվրոպական ցեղակցության լեզու:

В. Г. Амбарцумян. Арменоведческая школа Мхитаристов и начало сравнительного исследования армянского языка. Книга Г. Петермана “Grammatica linguae armeniacae” (1837 г.) положила основу охвата армянского языка в кругу индоевропейских языков. Как известно, автор книги, – как и многие европейские ученые, занимающиеся в свое время арменоведением, особенно в области компаративистики, – получил свое образование по армянскому языку у Мхитаристов Венецианской конгрегации, что дало ему возможность представить, в частности, фонетику армянского языка в сравнении именно с древними и новыми европейскими языками. В этом ему помогло не только знание армянского языка, но и исследования венецианских ученых, в первую очередь труд авторов “Нового словаря армянского языка” (1836-1837 гг.), в котором, заметим, почти все заглавные слова даются в сравнении с такими языками, как древнегреческий, латынь, древнеперсидский и другие, иногда отмечается их близость и по происхождению. Таким образом, на заре сравнительно-исторического языкознания сделан первый реальный шаг при изучении армянского языка, как родственного с другими индоевропейскими языками.

V. G. Hambardzumyn. Armenological School of Mkhitharist's in Venice and Commence of Comparative Studies of Armenian Language.

H. Pereman's book "Grammatica linguae armeniacae" (1837 թ.) served as bases for the inclusion of Armenian in Indo-European languages. It is known, the author (as well as many other European scholars who had been engaged in Armenology, mainly in the field of comparative studies), studied Armenian in the Mkhitarist Congregation, and had the opportunity to make comparisons between Armenian and other old and new European languages in his book, especially in phonetics. Not only the knowledge of Armenian helped him, but also the Mkhitarist's studies, first of all the work "New Dictionary of the Armenian Language", in which with almost all Armenian words are given comparisons in ancient Greek, Latin, Old Persian and other languages, which often have the same origin. Thus, at the beginning of Historical-Comparative Linguistic the first real step in the field of Armenian studies, as an Indo-European language, has been done.